ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

«Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի արտահերթ նիստի

2026թ-ի մայիսի 25-ին կայացել է մանկավարժական խորհրդի արտահերթ նիստ:
Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2026 թ.-ի մայիսի 25-ի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
2. Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
3. Տարեկան 200 ժամից ավելի բացակայություն ունեցող 1-9-րդ դասարանների սովորողների համար լրացուցիչ քննությունների անցկացման ժամանակացույցի և հանձնաժողովների կազմի որոշում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
4. «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 9-րդ դասարանի պետական ավարտական քննություններ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
5. Ներքին գնահատման հանձնաժողովի ձևավորում, լիազորությունների բաշխում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
6. Կիսամյակի և ուսումնական տարվա ամփոփում՝ ԱՈՒՊ-ներ, մատյաններ, հաշվետվություններ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
7. Թեմատիկ պլանների վերանայում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
8. Այլ հարցեր

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը ներկայացրեց մանկավարժական խորհրդի 2026 թվականի մայիսի 25-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 8 հարցից:

Լսեցին՝

2. **Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Տնօրեն Ա. Գարեգինյանը անդրադառնալով նախորդ նիստի որոշումների կատարմանը՝ նշեց, որ դասղեկներն իրականացրել են սովորողների բացակայությունների շարունակական և հետևողական հաշվառում, ամփոփել տվյալները և մայիսի 22-ին ներկայացրել վերջնական տեղեկատվությունը՝ 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորողների վերաբերյալ:

Լսեցին՝

3. **Տարեկան 200 ժամից ավելի բացակայություն ունեցող 1-8-րդ դասարանների սովորողների համար լրացուցիչ քննությունների անցկացման ժամանակացույցի և հանձնաժողովների կազմի որոշում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Տնօրեն Ա. Գարեգինյանը նշեց, որ երկարատև՝ տարեկան 200 ժամից ավելի բացակայություն, ունի Սահակյան Էլինանան (4-րդ Գ դասարան): Նշվեց, որ սահմանված կարգի համաձայն 1-8-րդ դասարաններում տարեկան 200 ժամից ավելի բացակայած սովորողը հանձնում է լրացուցիչ քննություններ ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից՝ գրավոր:

Քննարկվեցին լրացուցիչ քննությունների իրականացման համար անհրաժեշտ թեստերի մշակման հարցը, քննությունների անցկացման հնարավոր օրերը և հանձնաժողովի կազմը: Առաջարկվեց Խուբլարյան Ամալյայի, Խաչատրյան Լուսինեի, Տէրտէրեան Անիի և Նավասարդյան Սյուզի թեկնածությունը որպես հանձնաժողովի անդամներ, իսկ հանձնաժողովի նախագահը՝ տնօրենի ժ/պ Անի Գարեգինյանը:

Լսեցին՝

4. **«Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 9-րդ դասարանի պետական ավարտական քննություններ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց, որ սահմանված կարգով ինտելեկտի (մտավոր) խնդիրներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ կարող են չմասնակցել պետական ամփոփիչ ատեստավորմանը: Նշվեց որ 9-րդ դասարանի բոլոր սովորողների ծնողները (նրա օրինական ներկայացուցիչներ) ներկայացրել են դիմում պետական ամփոփիչ ատեստավորումից իրենց երեխային ազատելու վերաբերյալ: Արդյունքում ավարտական քննությունների կազմակերպման անհրաժեշտություն չկա, սովորողներին կտրվի հիմնական կրթության վկայական՝ առանց քննական գնահատականների:

Լսեցին՝

5. **Ներքին գնահատման հանձնաժողովի ձևավորում, լիազորությունների բաշխում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը հայտնեց, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ՝ մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկը անհրաժեշտ է իրականացնել ներքին գնահատում: Այդ նպատակով անհրաժեշտ է կազմել հանձնաժողով և սահմանել ժամկետներ: Բացի այդ Ա. Գարեգինյանը հայտնեց, որ Նոր նորք վարչական շրջանի աշխատակազմից հանձնաժողովում կներառվեն Լիլիթ Ղազարյանը և Հայկուհի Կիրակոսյանը:

Արտահայտվեցին

Մանկավարժներն առաջարկեցին այս տարի ևս պահպանել նախորդ տարվա հանձնաժողովի կազմը մանկավարժական աշխատողների մասով (Հայարփի Մինասյան, Համեստ Փիրումյան, Անահիտ Անդրեասյան, Ալինա Թորոյան), միաժամանակ յուրաքանչյուր անդամին կցելով մեկական

մանկավարժ՝ աշխատանքների իրականացման գործընթացում տեխնիկական և կազմակերպչական աջակցություն ապահովելու նպատակով: Որպես աջակցող մանկավարժներ առաջարկվեցին Տաթև Մխեյանի, Մարգարիտա Հակոբջանյանի, Սոնա Պողոսյանի և Անի Աբասյանի թեկնածությունները:

Լսեցին՝

6. **Կիսամյակի և ուսումնական տարվա ամփոփում՝ ԱՈՒՊ-ներ, մատյաններ, հաշվետվություններ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը անդրադարձավ մատենավարության պատշաճ վարման կարևորությանը և հորդորեց ուսուցիչներին ևս մեկ անգամ ստուգել՝ արդյոք բոլոր անհրաժեշտ լրացումները կատարվել են ամբողջական և սահմանված կարգին համապատասխան՝ կիսամյակային ամփոփման ընթացքում հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով: Ներկայացրեց նաև, որ անհրաժեշտ է սահմանված ժամկետներում իրականացնել ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները, այնուհետև կազմակերպել դրանց տարեկան ամփոփման գործընթացը: Միաժամանակ հիշեցրեց տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների և մանկավարժների հաշվետվությունների ներկայացման սահմանված ժամկետների պահպանման անհրաժեշտության մասին: Ա. Գարեգինյանը ներկայացրեց նաև դասղեկների, դաստիարակների և ուսուցիչների աշխատանքների արդյունավետ հաշվետվողականության ապահովման նպատակով մշակված նոր ձևաթուղթը:

Լսեցին՝

7. **Թեմատիկ պլանների վերանայում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը հանձնարարեց հունիսին վերանայել առարկայական թեմատիկ պլանները՝ ուշադրություն դարձնելով նպատակների և վերջնարդյունքների ձևակերպումներին:

Լսեցին՝

8. **Այլ հարցեր**

Քննարկման համար այլ հարցեր չեն առաջարկվել:

Լսելով 2026 թվականի մայիսի 25-ի մանկավարժական խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանկավարժական խորհրդի 25.05.2026 թվականի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել տնօրենի կողմից նախորդ նիստի որոշումների կատարումը՝ արձանագրելով, որ դասղեկների կողմից իրականացվել է սովորողների բացակայությունների շարունակական և հետևողական հաշվառում, ամփոփվել են տվյալները և սահմանված

ժամկետում՝ մայիսի 22-ին, ներկայացվել է վերջնական տեղեկատվություն՝ 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորողների վերաբերյալ:

3. Ստեղծել 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորողների համար լրացուցիչ քննություններ ընդունող հանձնաժողով հետևյալ կազմով՝
    - նախագահ՝ տնօրենի ժ/պ Անի Գարեգինյան,
    - անդամներ՝ Խուբլարյան Ամալյա, Խաչատրյան Լուսինե, Տէրտէրեան Անի, Նավասարդյան Սյուզի:
4. Լրացուցիչ քննությունները կազմակերպել հետևյալ ժամանակացույցով.
    - մայիսի 26-ին՝ Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա, Երաժշտություն, Մայրենի,
    - մայիսի 27-ին՝ Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ, «Այլընտրանքային հաղորդակցում»:
5. Համապատասխան մեթոդական միավորումներին հանձնարարել մշակել սահմանված ժամկետներում ներկայացնել քննական թեստերը՝ յուրաքանչյուր առարկաների համար երեք օրինակից:
6. 9-րդ դասարանի բոլոր սովորողներին ազատել պետական ամփոփիչ ատեստավորումից՝ հիմք ընդունելով ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից ներկայացված դիմումները և գործող կարգավորումները: Սահմանված կարգով և ժամկետներում նրանց տրամադրել հիմնական կրթության վկայական՝ առանց քննական գնահատականների:
7. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ՝ մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկն իրականացնել ներքին գնահատման գործընթացը:
8. Հաստատել ներքին գնահատման աշխատանքներն իրականացնող հանձնաժողովի հետևյալ կազմը.
    - Հանձնաժողովի նախագահ՝ տնօրենի Ժ/Պ Անի Գարեգինյան,
    - հանձնաժողովի քարտուղար՝ Ալինա Թորայան,
    - հանձնաժողովի անդամներ՝ Հայարփի Մինասյան, Համեստ Փիրումյան, Անահիտ Անդրեասյան, Հասմիկ Առաքելյան, Քրիստինե Խաչատրյան, Հայկուհի Կիրակոսյան, Լիլիթ Ղազարյանը:
9. Հանձնաժողովի մանկավարժական համայնքի ներկայացուցիչներից յուրաքանչյուրին կցել մեկական աշխատակից՝ տեխնիկական և կազմակերպչական աջակցություն ապահովելու նպատակով. որպես աջակցող մանկավարժներ ներգրավել Տաթև Մխեյանի, Մարգարիտա Հակոբջանյանի, Սոնա Պողոսյանի և Անի Աբասյանի:
10. Ներքին գնահատման աշխատանքներն իրականացնել 2026 թվականի հունիսի 15-ից մինչև հունիսի 26-ը ընկած ժամանակահատվածում:
11. Հանձնարարել ուսուցիչներին մինչև կիսամյակային ամփոփումը ևս մեկ անգամ ստուգել և ապահովել մատենավարության ամբողջական և պատշաճ իրականացումը՝ սահմանված կարգին համապատասխան:
12. Հանձնարարել մանկավարժական աշխատողներին սահմանված ժամկետներում իրականացնել ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները և կազմակերպել դրանց տարեկան ամփոփման գործընթացը:

13. Հանձնարարել տնօրենի տեղակալներին, դասղեկներին, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժներին հաշվետվությունները ներկայացնել սահմանված ժամկետներում:
14. Հավանություն տալ դասղեկների, դաստիարակների, ուսուցիչների աշխատանքների և ՄՀ աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների հաշվետվողականության ապահովման նպատակով մշակված նոր ձևաթղթի կիրառմանը:
15. Հունիսին վերանայել առարկայական թեմատիկ պլանները:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**

26.05.2026